ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոսի

Էրիկ Գևորգի Վարդանյանի «Կայուն ճարտարապետության խնդիրները ՀՀ ժամանակակից հասարակական շենքերի ճարտարապետության մեջ» թեմայով թեկնածուական ատենախոսությոան վերաբերյալ, որը ներկայացվում է ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Կայուն ճարտարապետությունը մեր օրերում ամենաարդիական մասնագիտական ուսումնասիրությունների կենտրոնում է՝ ինչպես տեսության մեջ, այնպես էլ պրակտիկայում: Ճարտարապետության զարգացումը, մարդկության ինչպես պատմության ընթացքում՝ այնպես էլ այսօր սերտորեն կապված է մարդկանց պահանջմունքների և հնարավորությունների հետ: Ժամանակակից մարդկանց պահանջները փոփոխվում են ավելի արագ քան նախկինում՝ բերելով բնական ռեսուրսների արագացված սպառման, բնական և քաղաքային միջավայրի փոփոխման, մարդկանց կյանքի որակի, առողջության վատթարացման: Կայուն ճարտարապետությունը զարգացման սկզբնական փուլում ուղղված լինելով բնական միջավայրի պահպանմանը՝ այսօր ունի այլ խնդիրներ, որոնք ներառում են տեղի պատմության, հիշողության, ինչպես նաև տնտեսական և տեխնիկական խնդիրներ, որոնց լուծումանն են ուղղված բազմաթիվ գիտական աշխատանքներ:

Ի համեմատություն միջազգային ասպարեզում կատարվող հետազոտություններին՝ Հայաստանում ոլորտը բավարար չափով և համապարփակ կերպով չի ուսումնասիրված, չնայած կան որոշակի հրատարակություններ և որոշ գործնական ծրագրեր են իրականացվել:

Այդ պաճառով Է.Գ. Վարդանյանի ատենախոսությունը՝ նվիրված Հայաստանում հասարակական շենքերի կայուն ճարտարապետության խնդիրներին, ունի արդիական նշանակություն:

Ատենախոսությունը կազմված է 131 էջ տեքստային մասից և հավելվածից: Տեքստային մասը բովանդակում է ներածություն, երեք գլուխ, եզրակացություն և 166 անուն օգտագործված գրականության ցանկ: Հավելվածը ներառում է գրաֆիկական պատկերներ, աղյուսակներ, լուսանկարներ: Ատենախոսության սեղմագիրը ներառում

է 22 էջ տեքստային մաս՝ այդ թվում ատենախոսության թեմայով հրատարակված ութ հոդվածների վերաբերյալ տեղեկատվություն:

Առաջին գլխում ուսումնասիրելով կայուն ճարտարապետության զարգացման պատմությունը, դրա մերօրյա դրսևորումները տարբեր երկներում՝ հեղինակը կարողանում է տալ ոլորտի ընդհանուր պատկերը, բացահայտել ատենախոսության խնդիրների ուսումնասիրության համապատասխան ուղիները՝ այն է դիտարկել ըստ տիպաբանական կտրվածքի և գործություն ունեցող և նոր շենքերի:

Երկրորդ գլխում քննարկվում են վերակառուցումների, վերափոխումների ժամանակ կայունության խնդիրները: Հասարակական շենքերի պահպանումը դիտարկվում է որպես կայունության հասնելու գործիք, ինչի համար հեղինակը քննարկում է ինչպես հայաստանյան այնպես էլ միջազգային տարբեր նախագծեր դրանցում կիրառված մոտեցումները:

Երրորդ գլխում հեղինակը քննարկելով նոր իրականացվող շենքերի կայունության խնդիրներին՝ անդրադարձել է նաև օրենսդրական և փաստաթղթաշրջանառության խնդիրներին: Արդյունքում երրորդ գլխով ամբողջանում է շենքի՝ ինչպես կայուն նախագծման, այնպես էլ իրականացման վերաբերյալ խնդիրների վերհանումը:

Բարձր գնատատելով աշխատանքը՝ ատենախոսության վերաբերյալ հարկ եմ համարում նշել հետևյալ դիտողությունները՝

- երրորդ հավելվածի գ. կետի «միջազգային հանրության կարևորագույն քայլերը կայուն զարգացման ուղղությամբ» գրաֆիկում, 1997 և 2030 թվականների քայլերի շարադրանքներում առկա են խմբագրական վրիպումներ:

- նույն քայլերի ժամանակագրական գրաֆիկը առավել հագեցած ունենալու ցանկությամբ կարելի էր այն հագեցնել նաև 2001թ.-ի Նյու Յորքի Habitat քաղաքների և ուրբանիզացիայի կայունացման վերաբերյալ ընդունած դրույթներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Էրիկ Գևորգի Վարդանյանի «Կայուն ճարտարապետության խնդիրները ՀՀ ժամանակակից հասարակական շենքերի ճարտարապետության մեջ» թեմայով ատենախոսությունը հաջողված, ավարտուն գիտական աշխատանք է, որում

բացահայտված են կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ, նրանում քննարկված և առաջարկված լուծումները կարող են կիրառվել հայաստանյան ավելի լայն շրջանակների կողմից՝ նպաստելով ընդհանուր կայուն զարգացմանը:

Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են ութ տպագիր հոդվածներում, որոնցից երեքը հայաստանյան ամսագրերում, երկուսը՝ օտարերկրյա, որոնցից մեկը ներառված է վարկանիշավորման Scopus աղյուսակում, իսկ երեքն էլ ներկայացվել են միջազգային գիտաժողովներում:

Հաշվի առնելով շարադրվածը՝ գտնում եմ, որ ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման պահանջներին, իսկ դրա հեղինակը լիովին արժանի է ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
ճարտ. թեկնածու, պրոֆ.՝ **Տ .Ս. Բարսեղյան**

Երևան 10.12.2021

ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտության
մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
ճարտարապետության դոկտոր՝ **Ս. Ա. Թովմասյան**